

ՀՈՇԱՀ

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՀՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

1902

„Droschak”
ORGANE
de la Fédération
Révolut. Arménie.

ԴՐՈՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL
„Droschak”
GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱԾՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԴԱՆ

ԹԻ Ի Ի Բ Ի Ա Յ Ի Ո Ւ Ժ Ը

Աւելորդ է, կարծում ենք, երկար կանգ առնել այն հանգամանքի վրայ, թէ Թիւրբիան զուրկ է այն ներքին ուժից, որը հիմք է բոլոր քաղաքակիրթ երկիրների անհամա գոյութեան:

Թիւրբիան չունի ոչ միաձոյլ կամ գոնէ մեծամասնութիւն կազմող մի ազգութիւն, ոչ կուլտուրական բարձրութիւն՝ առաջադիմելու և օտարների հետ մրցելու համար, ոչ հաստրակական կարիքների մասին հոգ տանող վարչութիւն:

Չնորհիւ այդ երկառմ գոյութիւն ունեցող վարչական սիստէմին նայել ժողովրդի վրայ իբրև մի կաթնատու կովի, որից միմիայն օգտառմ են տուրքերի, կաշառքների, մօնոպօնների, կողովուտների միջոցով առանց փոխարէնը ուեւ բան տալու — արդիւնաբերութիւնը այնտեղ չի զարգանում, ազգաբնակութեան նիւթական վիճակը չի բարուրում. բրիստոննեաներից յետոյ, սկսել են գաղթականութեան դիմել և մահմէտականները՝ տաճիկներն ու քրդերը: Աւելի ևս. Թիւրբիայում չի նկատւում ազգաբնակութեան բնական աճում, որ ճակատագրական պիտի համարսկ կուլտուրակէս յետ մնացած երկիրների համար:

Բայց, քանի որ համարեա բոլոր հարեան երկիրներում գոյութիւն ունեն հակառակ պայմաններ, բնականաբար տարեց տարի աւելանում է հարեանների ուժը, մեծանում է նրանց կուլտուրական աճում, որ ճակատագրական պիտի համարսկ ազգեցութիւնը Թիւրբիայի վրայ:

Զընայած այդ բոլորին՝ „հիւանդ մարդը” շարունակում է պահպանել իր գոյութիւնը և սպառնում է կարծես գեռ երկար շարունակել:

Հանրածանօթ ճշմարտութիւն է, որ մեծ գեր են խաղում այդտեղ եւրօպական պետութիւնների ունեցած տարբեր շահերը. նրանց մրցակցութիւնը միմեանց հետ, որից գիտեն օգտաել օսմաններն պետութեան վարիչները ..

Այնուամենայիւ, սուլթանների գոյութեան ամենաուժեղ նեցուկը գա չէ:

Անբըստ փոտած Թիւրբիան անկարող կը լինէր պահպանել իր քաղաքական գոյութիւնը և առանց եւրօպական գիպումատիայի համաձայնութեան, եթէ նրա լծի տակ հեծող տարբերը հասկանալին միմեանց, համաձայնէին իրենց ընդհանուր պահանջների վերաբերմամբ և գործէին միասին ձեռք ձեռքի տալած:

Եւ ճիշդ ովկ է պաշտպանում իրապէս Թիւրբիայի ներկայ կացութիւնը. — Ոչ ոք, որովհետև պետութեան հիմք չեն կարող կազմել անկիրթ, խառնիճաղանձագութիւնների, ոսճիկի համար ծառայող մի բուռը պաշտօնեաների, հետ միասին: Միւս բոլոր կենսունակ տարրերը դէմ են Թիւրբիայի ներկայ քաղաքական կացութեան: Դէմ են և՛ Թիւրբի փոքրամասնութեան հասկացող, քիչ շատ մարուր տարրերը և ոչ-թիւրբ մեծամասնութեան բոլոր տարրերը՝ քրիստոնեայ հայերը, մակեդոնացիները, մարոնիստները, յօները, մահմէտական ալբանացիները, տարրերը, նոյնիսկ քրդերը:

Բոլորը դէմ են Թիւրբիայի արդի կացութեան, բայց... այդ դէմ լինելը արդէք չընի, որովհետև նրանք դէմ են զատ զատ, առանց միմեանց հասկանալու, առանց մէկ նկատակ ունենալու: Ահա այս անհամաձայնութեան շնորհիւ է, որ Թիւրբիան պահպանել է իր գոյութիւնը. սրա մէջն է կայանում նրա գիմացիանութեան ուժը:

Սրաբներին նա Ճնշել է ալբանացիների միջոցով, ալբանացիներին արաբների: Կոտորել է հայերին, երբ լուսն են եղել միւսները. ջարգել է յօներին, երբ լուսն էին մակեդոնացիները, իսկ այսօր կոտորում է վերջններին, որովհետև լուսն են միւսները: Դրանց բոլորին, ինչպէս մի քանիսին միաժամանակ Ճնշել տաճիկը կը գծւառանար, անկարող կը լինէր, բայց առանձինառանձին նա կարողացել է և կը կարողանայ նոյնպէս և տպագայում: Նամանաւանդ գա յաջողում է նրան այն գէպգում, երբ լինդիրը վերաբերում է Թիւրբիայի մի անկի ւնին, մի աղ գութեան: Մեծ պետութիւնների մէջ միշտ գտնուում են մէկ-երկուսը որոնց շահերը հակառակ լինելով այդ անկիւնի շահերին, թէ են տալիս Թիւրբիային:

Բոլորովին այլ գրութիւն կ'ըստեղծւի, երբ յաջողի կապիլ, միացնել թիւրբիան լծի տակ հեծող պայտութիւններից մի քանիսին, երբ ապստամբութիւնը պայմանի երկիր զանազան անկիւններում: Կիսասոված, ոտարորիկ տաճկաց զօրբերը անկարող կը լինեն արագ կերպով մարել վառող կրակը. կը թուլանայ գիպօմատների հակաշուական ուժը և հիւանդ մարդը՝ վերջ կը տայ իր գոյութեան: Օսմաննեան պետութիւնը կամ կ'ոչնչայ քաղաքականապէս, կամ կը վերածւի մի նոր, արդարացի քաղաքական կաղմի, ֆէդէրախստական հողի վրայ, որը կ'ապահովէր աշխատանքի և արդիւնաբերութեան շահերը, որը միջոց կը տար բոլոր պայտութիւններին

դարդանալ և պահպանել իրենց ազգային գոյութիւնը:

Դժբախտաբար, մենք գեռ հեռու ենք այդ ցանկալի օրերից: Մակեդոնիայի այսօրւայ ապստամբութիւնը մի նոր ապացոյց է դրան:

Ապստամբութիւնը ծագելու հենց առաջին օրւանից հակակրական նշաններ սկսեցին ցոյց տալ ոչ միայն անաղութեան սիրահար մեծ պետութիւնները, այլև բոլոր հարեան փոքրիկ երկիրները՝ Յունաստանը, Սերբիան, Ուստմանիան:

Դրանք բոլոր գէմ են մակեդոնիական շարժման, վախենալով մի գուցէ Մակեդոնիան միացւի Բուլգարիային և խախտւի ոհաւասարակութիւնը՝ Բալկաննեան թերակղզում: Բացի դրանից, դրանց բոլորը ունի և մի այլ աւելի խոր երկիւղ այն է որ Մակեդոնիայի և Բուլգարիայի միացումը կը կլանէ այդ ցըաննում ապրող յոյներին, սերբերին, կուցօվալախներին:

Այսպիսով ոմակեդոնական խնդրի լուծումը ոհայկական խնդրից ոչպակաս գժւարութիւնների է հանդիպում:

Այդ ծանր գրութիւնից դուրս գալու համար է, որ վերջերս առաջ եկաւ Մակեդոնիայում նոր յեղափոխական կազմակերպութիւն (գլխաւորապէս Մակեդոնիայում գոյութիւն ունեցող մարմններից), որը իրեն նշանաբան ընկունելով ոՄակեդոնիան մակեդոնացիներին, որոցեց հեռու պահել այդ վայրը շահ ունեցող հարեան փոքր և մեծ պետութիւնների քաղաքական կոււածաղիկ գաւռնալուց: Եթէ սրան աւելացնենք և այն, որ նոր կօմիտէն պահանջում է կատարեալ հաւասարութիւն Մակեդոնիայում ապրող աղգութիւնների լեզւի, կրօնի, քաղաքական իրաւունքների վերաբերմամբ — մենք կըստանանք մի այնպիսի ծրագիր, որը միակ իրագործելին կարող է համարել Տաճկաստանի գլխաւոր վայրերի համար:

Այդ ծրագրի կողմակից է եղել Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր ամբողջ գոյութեան ընթացքում:

Նայն ինքնավարութիւնն և ազատութիւններին գործեց նկատմամբ բոլոր աղգայնական ցըանների համար, հաւասարութիւնն բոլոր ապրող աղգութիւնների համար և ուրաց գուները՝ ու չէղոք դիրք հարեան պետութիւնների վերաբերմամբ — ահա միայն կարող են ապահովել Թիւրքիայում ապրող աղգութիւնների ապագան և որոնց իրագործումով միայն կարող է գեռ ևս պահպանել իր գոյութիւնը օսմաննեան պետութիւնը:

Միգհաթ փաշայի սահմանադրութիւնը կամ նրա նման ունի իրահասարդ թիւրքերի պահանջած այլ կեդր ուն ական, միատեսակ օրենսդրութիւնը չեն կարաղ վերացնել արդի գլխացնել արդի գժութիւնների ապագան և որոնց իրագործումով միայն կարող է գեռ ևս պահպանել իր գոյութիւնը օսմաննեան պետութիւնը:

Մալու ժողովրդի կեանքից հետու կազմւած տէօրիաների: Իրենց հասկացողութիւններով, վարը ու բարբով, կուլտուրական մարձրութեամբ այդ աղգութիւնները շատ հեռու են միմեանցից և հետևաբար կարօտ են տարբեր օրէնքների, տարբեր վարչական սիստէմների իրենց ներքին գործերում:

Առանց Թիւրքիայում ապրող բոլոր աղգերի աշխարհագրական շըանների ինքնավարութեան, սահմանադրական նրիտասարդ թիւրքերը համակրողները չեն գտնի ոչ Հայաստանում, ոչ Սրբիայում, ոչ բուլգարների, ոչ լըանացիների շաբերում:

Բողոքներին ենթակայ Թիւրքիայի բոլոր վայրերում ոչ մի կուլտուրական աղգութիւն չի կազմում Ճնշող մեծամասնութիւն, որպէս զի կարելի լիներ ինկատի չափանիկ և ուղիների արդարացի պահանջները: Փարբականութիւնների կազմող աղգութիւնների իրաւունքների մերժումը անարդարացի և վտանգաւոր է և այսօր և միշտ, ոչ միայն Մակեդոնիայի, այլև Թիւրքիայի միւս բոլոր գլխաւոր շըանների համար: Ահա ինչու միայն կատարեալ հաւասարութիւնը զանազան աղգութիւնների վերաբերմամբ կամք կամքութեան մեջ կարող է գրաւական լինել ինքնավարութիւնն վայելող շըանների խաղաղ կուլտուրական առաջադիմութեան համար:

Նոյն սկզբունքը պիտի ղեկավարէ Թիւրքիայում ապրող աղգութիւններին և արտաքին քաղաքականութեան մէջ: Հարեւան պետութիւնների քաղաքական ինտերիւններից հետու մնալը միմիւյն կ'ապահովէ արդինքնավար շըանների կենսունակութիւնը միայն չէկուքութեան շնորհիւն նրանք կը կարողանան աղաւուել պատերազմների թատերաբեմ լինելուց, և, հետևաբար, ուժեղ զօրք պահելու տեղը հնարաւորութիւնն կըստանան Տախիւն ժողովրդի սուլ կօպէկները նոյն այդ ժողովը առաջադիմութեան անհրաժեշտ կարիքների վրայ:

Միայն այս պայմաններով կարելի է բաւարարութիւն տալ և համերաշխութիւն առաջ բերել Թիւրքիայի բոլոր գժգուհ տարբերի մէջ: Միայն այդ հողի վրայ կարող է պահպանել իր գոյութիւնը ինքը օսմաննեան պետութիւնը:

Մակեդոնացիները այդ բանը համարական արդէն:

Յոյս ունինք, որ նոյնը կը հասկանան և արբանացիները, և յօյները, և քրդերը և նոյնիսկ անկեղծ տաճիկ աղգակաները:

Եթէ այս միտքը տարածւի աւելի լայն շըաններում և մենք կարողանանք կազմել բոլոր աղգութիւններից մի մեծ յեղափոխական դաշնակցութիւն, իրենց աղգային անհամարականութիւնը պահպանելու հիմունքներով, այն ժամանակ կը լցցւին մեզ բաժանող աղգութիւնները, կոչնչանայ բանապետական թիւրքիայի այսօրւայ ուժը:

Մասնակի շարժումները կը վերածւին լինդհանութապսամբութեան և սուլթանի լծի տակ հեծող տարբերը կը դադրեն նըլլութեամբ քեսքին սարսու և զիսպահութեան խաղաղի լինելուց:

ԵՐԻՊԱԿԱՆ ՄԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՎ

Ա.ԲԵԼԵԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՐ

Անատօլ Լզ Ռուբենի ընթափքէնս-ի մէջ հրատարակած մի ընդարձակ յօդւածի մէջ շեշտում է միջազգային մի խորդաժողովի անհրաժեշտութիւնը՝ արևելեան խնդիրներին լուծում՝ տպալ համար։ Քաղլաճաբար առաջ ենք քերում այդ յօդւածի

Ավ որ քաջութիւն ունի անաշառորդէն դիտելու Քալշ-
կանեան երկրներում՝ տիրող յուղումը և թիւքը կայս-
րաթեան ներքին խորովութիւնները — նրա աչքում
Արևելքի վիճակը տարօրինապէս անհանդատացնող է:
Այդ վիճակը չէ կարող երկար շարունակել, առանց
մատնելու թիւբքիան, ապա ուրեմն և Եւրոպան՝ զինւած
լիդչարումների վտանգին, որոնց ծաւալին ու չետեանքը
ոչ ոք չէ կարող նախատեսներ:

Նթէ արևելքնեան ժողովուրդների տառապանքները, եթէ
այն անպատճութիւններն ու չարչարանքները, որոնց են-
թարկւած են Մակեդոնիայի քրիստոնեանները, եթէ մի
ամեսող ժողովորդի ընածնչման գործը, որ յամառ կերպով,
առաջ է տարւում Հայկական բարձրաւանդակի վրայ—
եթէ այդ բոլորը չեն կարող յուղել մեր եսամուռ թիւնը
գեթ պետական գործիչների խօհեմութիւնն ու զգու-
շաւորութիւնը, չպիտի անտարբեր մնային՝ հանդեպ միշտ
աճող յուղմունքներին և ապստամբների կենտրոնացման
Մակեդոնիայում ու Հայաստանում Եւրոպայում, ինչպէս
և Ասիայում, սուլթաններ ճպնում է վերականգնել խա-
ղաղութիւնը աէորի միջոցով։ Թալյանը, բանաբարութիւնն
ու կոտորածը դարձել են նրա վարչութեան սովորական
միջոցներ՝ թէ Վարդարի ու Ստրումայի հովիտներում և
թէ Վանայ ճի ափերում . . .

Սակենքօյիի այսօրւան վիճակը նման է 1876 թւի
Քօմիտա-Հեղցեգովինայի վիճակին: ‘Սա գեռ աւելի վատ-
թար է, քանի որ գաւառների մէջ սուլթանի հրահանգով
կենտրոնացած զօրքերը միայն բռնաբարում, աւերում’ ու
յուսահատութեան են հասցնում դժբախտ քրիստոնեայ
աղքաբնակութիւնը:

Եթէ եւրօպական գիււանադիտութիւնը չկարողանայ չարեցի առաջն առնել՝ Մակեդոնիայի հետ նոյնը պիտի լինի, ինչ որ եղաւ առաջ Բօսնիա-Հերցեգովինայի հետ: Ապստամբութիւնը այստեղ ընդհանուր կերպարանը է սահմանալու գարնանը: Բօլգարական կառավարութիւնը, ինչպէս երբեմն Մերբիան ու Մօնաշներքոն Բօսնիայի զեպքում, ստիպւած է լինելու կամայակամայ իր պաշտպանութեան տակ առնել Մակեդոնիայի քրիստոնեաներին: Մերբիան չի ուզենալու յետ մնալ Բօլգարիայից: Ուստաստանը ևս իր կողմից, չնայած Աւատրիայի հետ կապած գոշընքին և ծայրագոյն արևելքում ունեցած իր հոգւերին՝ չպիտի կարողանայ ձեռնոպահ մնալ կախւերի դիմաց, և մահաւանդ չպիտի թոյլ տայ ոչնչացնելու իր ուղղափառ ելքայրներին: Եւ այդպահով շնորհիւ զիպլօմատիայի անհեռատեսութեան, կամ լաւ է ասել, շնորհիւ կառավարութիւնների անտարբերութեան ու փոքրագութեան՝ եւրօպան կարող է գահավիժել մի նոր Արևելքան պատերազմի մէջ որը աշխարհի ներկայ վիճակում կամ կարող է գառնայ համաշխարհային մի պատերազմ:

Ահաւասիկ, անշուշտ, մայլ հեռապատճենները: Ավ որ
հեռաւում է անցքերին, ով որ յիշում է պատմութիւնը՝
դիտէ, որ այդ հեռապատճենները դիտմամբ չեն ուկա-
ցլուած... Եթէ եւրօպան չի ուզում, որ իր հանգստու-
թիւնը խանգարի տաճկական նահանգների մի բնդէչաւ-

նուր ապստամբութեամբ՝ ապա ժամանակ է, որ նա
ականչ դնէ նրանց գանգատներին ու չեծեծանըներին:

Եւ ուրիշ ի՞նչ եղանակով կարող է արտայայտել Եւրոպայի այդ ուշադրութիւնը դէպի արեւելքան դժբախտ ժողովուրդները, եթէ ոչ դիմումատիական մի միջամտութեամբ: Եւ եթէ ուզում են, որ այդ միջամտութիւնը ազգու, արդիւնաւոր լինի, ուրիշ ի՞նչ միջոց կայ, եթէ ոչ մի խորհրդաժողով կամ մի կօնդրէս. . .

Արևելքում, ՀՅԱց Թիւբրիայի մէջ կան բազմաթիւ խնդիրներ, որոնք կարդարացնէին այդպիսի մի խորհրդագովիք գումարումը: Բերլինի դաշնագրի մի շարք էական յօդւածները մնում են մեռած տառ: Եւրօպական մէկ խորհրդաժողով միայն կարող է հսկել նրանց գործադրութեան վրայ, ինչպէս որ ՀՅԱց ինքը Բերլինի դաշնագրին է նախատեսել:

Այդպէս որոշ, սահմանագծւած նպատակ ունենալով՝
խորհրդաժողովը չի կարող անհանգստութիւն պատճառել
ոչ կառավարութիւններին և ոչ էլ խաղաղութեան բա-
րեկամներին... Խորհրդաժողովի նպատակը կը լինի՝ լուծել
այն բոլոր խնդիրները, որոնք յարուցւած են Բերլինի
գաշնագրի չփորձագրութեամբ... .

Այդպէս; Հայկական ինտիրը: Ասեական աղդերից ամենաեւրօպական ազգի արիւնաթաթախ մնացորդները փրկելու համար՝ բաւական է միայն յիշեցնել Բ. Դրան, որ նա յարգէ դաշնագրի 61-րդ յօդւածը. և քանի որ սուլթանը այդ դաշնագրով պարտաւորութիւնն է ստանձնած՝ բաւական է միայն ստիպել նրան՝ պետութիւնների քննութեան ենթարկել այն միջցները, որ նա ձեռք է առել՝ իր հպատակ Հայերի ավագովութեան համար:

‘Նոյնը՝ Սակեդօնիսայի և այն եւրօպական նոհանդների վերաբերմամբ, որ Բերլինի գաշնագիրը դրել է սուլ-թանի տիրապետութեան տակ. . .

Եւրօպայի ընդհանուր գոռութիւնը ոչ միայն չի կարող ընդդիմանալ այդպիսի մի խորհրդաժողովի գումարելուն, այլ ընդհակառակը նպաստաւոր կը լինի նրան։ Գլխաւոր գծւարութիւնը թերեւս այն կը լինի, թէ պետութիւնների ո՞ր համախմբումը կամ ո՞ր պետութիւնը իր փրայ կառնէ այդպիսի մի առաջարկի նախաձեռնութիւնը։ Խոչ վերաբերում է մեղ՝ մենք — ասում ենք այդ բարձրաձայն — կը ցանկանայինք, որ այդ նախաձեռնութիւնը պատկանէր Քրանսիային։ Այդ գերը արժանի կը լինէր նրա անցեալին և միանդամայն նրա լաւագոյն տրագիֆիաներին։ Եթէ ուրիշ ազգերը չետելին էլ նրան՝ Քրանսիան ստանձնելով այդպիսի մի նախաձեռնութիւն՝ կը բարձրանար, պատւաւոր գիրք կըստանար Արևելքի ևամբողջ աշխարհի աչքում։

Մեր կառավարութիւնը՝ ծանրաբեռնաւծ բազմաթիւ-
ուրիշ հոգսերով և գուցէ չափից դուրս կլանւած մեր
ներքին կոխւներով՝ կ'ո՞ւնենայ արդեօք այդպիսի մի քայլ
անելու կորովն ու արիութիւնը ձնշւած ժողովուրդների
բարեկամների, արդարութեան ու մարդկայնութեան
պաշտպանների պարտականութիւնն է մղել նրան դէպի
այդ քայլը: Նրանիք բազմաթիւ են և ազգեցիկ կառա-
վարութեան քաղաքականութեան սիխների շրջանում, և
այդպիսի մի գործի համար՝ նրանք կարող են վստահ
լինել որ կ'ունենան աջակցութիւնը այն բոլոր մարդկանց,
որմնք, առանց խստութեան կուսակցութեան ու կրօնական
դաւանանքի, կարծում են, որ Պրանսիսիան ունի գեռ մի
առարկութիւն Առևելում... .

* * *

Լուս գիշերին մտքիս դիմաց
Շատ ստւերներ ժողովւան. —
Ընկերներս՝ մեռած, կորած,
Հոգուս խորքով անց կացան.

Նրանց աչքերն՝ բոց ու վօճ՝
Սրտիս խորքը նայեցին.
Սիրոս բաց էր խոր վէրքի պէս, —
Նրանք այնտեղ սուզւեցին:

Անհաւասար, գոռ կուի մէջ
Ընկաք, իմ վեհ ընկերներ.
Ան, ձեր շիրիմն իմ սրտումն է,
Իմ վեհ, իմ սուզը ընկերներ. . .

* * *

Սուրբ հայրենիքս երգել կ'ուզէի
Իմ երգերի մէջ հոգերուղին, հնչուն.
Երկնի հետ խօսող լեռներն վիթխարի.
Խու թռիչքն արծուի այն վեհ բարձրունքում:

Մայր-ժողովուրդս երգել կ'ուզէի.
Յորձուտ Արաբսը չքնաղ ափերով,
Հրեղէն նժոյգն երգել կ'ուզէի
Մասսայ լանջերում սրարշաւ տալով:

Հայ կտրիճներին երգել կ'ուզէի
Խւ կուի կոչը՝ հպարտ ու վայրի,
Սուրբ ազատութեան տօնը յաղթական.
Խու վառ ապագան իմ հայրենիքի. . .

Բայց կոպիտ ձեռներ
Փշեցին սրտիս քնարը՝ բեկ-բեկ.
Բայց կոպիտ ձեռներ
Կտրեցին նրա լարերը՝ մէկ-մէկ. . .

ՀԱՅ-ԳՈՒՍՏԱԿ

Թ Պ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե

ՆԱՄԱԿ ԱԼԱՇԿԵՐՏԵՎ

15 օգոստոս 1902

Խոլամի օրէնքի նախարանն է թալնել, կոտորել խաթեր, գողնալ աւրել: Զկայ շինել չկայ դործել չկայ այնտեղ բարիք, չկայ հանդիսու: Այնտեղ կը թագաւորէ միմիայն չարիք, ու չարիքն է միանդամայն Խոլամի Աստածածը:

Հայու աստանդական լինելն ու գաղթելը, երկըն քոչով դուրս գալ ու մանելը թիւրին անհանգստացուց, ասոր համար ալ միջոներ հնարեց ձար ու ձամբան կտրելու ցիրուցան խեղճ հայու, գլխուն, որպէս զի ամէն բան կատարւած լինի, որպէս զի հայը ոչ օր և ոչ արև տեսնի իր կեանքի մէջ՝ թէ քարի վրայ, թէ սարի գըլինին, թէ քաղաքի մէջ և թէ վերջապէս ամէն տեղ:

Քիւրդերը կ'ընէին, ինչ որ պէտք էր, ոչ մէկ հայու կամ գաղթականի խաթըրը չէին ժողներ—կը թալնելն հաւասար կերպով, բայց այդ քրդին չմնաց, շուտով զորքն եկաւ կոտորածէն յետոյ և սուսիկ փուսիկ տեղ:

շինեց իրեն համար. համոզեց քրդին, մտաւ անոր տուն և սկսեց ապրել անոր կողքին. քրդին կ'ըսէր՝ ոչ ես եկեր եմ՝ քեզ ֆէդալիներէն պաշտպանելու, այդ քետաֆիներներու ձեռքէն աղատելու համար, անոնք գութ չունին, կըսպաննեն քեզ ու քու երեխային. որտեղ տեսնէք հայ մը, թալնեցէք, սպաննեցէք. . . Այսպէս էր եկող բոլոր զնւորական դասի քարոզը: Քիւրդը աւելի ու աւելի կը լցւէր կատաղութեամբ, եթէ իսկոյն չնկատէր զինուորներու վատ ընթացքը իր տան ու ընտանիքի վերաբերմաբ. ու նա այսօր խոր հառաչելով կ'ըսէ ու կը վկայէ՝ ովահան ալ այս տեսաւ տաճկէն որ չդիմացաւ, ֆէդահ դարձաւ ու զինքը մեռնելու տւաւ. մենք զէնքը ձեռքերնուա անզէն վլահին չափ ալ սիրտ չունինք, վայ է եկեր մեր օրին:

Շատ տեղեր քիւրդը մոլորւեց իր մմար մէջ. հայու գալ ու գնալէն ձեռք քաշեց, զբաղւած էր զօրքերու գալ ու գնալով անոնց կամքը կատարելով—Դէհ, Սլու Սալէհ բինբաշու (հաղարապեա) ձին բռնէ, գարի բեր, գառ մորթեցէք, փլաւ, եփեցէք, լաւ դոշակներ բերէք, բերէք հա բերէք, տօ մշակներ, չլինի անչնորհ բռնթիւն ընէք, կը վիրաւորւի էփէնտին, կ'երթայ հեռագիր կուտար: (Զինորական դասը կ'օգտւի քրդի տգիտութենէն ու միամտութենէն, իր էշը քշելու համար հեռագիր տալու սպառնալիքով կը վախցնէ և իր ուղածը կ'առնէ կամ կը պահանջէ): Քիւրդը գեռ ևս չի մտածեր որ ինքն ալ ընկեր է հայու գժրախտ ճանապարհին: Հայն ալ պատեց, նստեցուց, վախցաւ, անոր պատւերները կատարեց մինչև որ իր կին ու սիրելիներն ալ վրայ տւեց: Անարդարութիւն չտեսած, արդարութիւն չեն սորվիր, քրդի զրկանք տեսնելու ժամերն հասեր է, նա կը տանջւի ու սկսիր է զգալ տանջւողի ցաւը. . .

Զօրքը կամաց կամաց քրդի հացն ալ ձեռքէն իլեց, գիշերով թալնեց, ցրեսկով թալնեց, ու կը թալնէ. գեռ ևս գաղթականներէն մէկը չեղաւ որ պատահէր զօրքին և չըսէր որ չթալանւեցի: Անոնք իրենք զիրենք վատահարա կը յանձննեն քրդին, բայց չեն ազատակիր զօրքէն: Բայզէտի սահմաններէն ու Պարսկաստանէն անցնող գաղթականները բոլորն ալ զօրքերուն հանդիպելով թէ թալանւեր, բանտարկւեր և թէ օրերով Բարագէտի մէջ տաժանակիր աշխատութեան մատնւեր են. և արսպէս տանջւելով գնացեր, հասեր են իրենց հայրենիք, ողջ թէ մեռած՝ յարտնի չէ:

Սահմանաբնակ զօրքը ալ միջոց չխնայեց քրդերուն գրգռելու հայերուն գէմ, բայց մինչև այժմ իզնըր գնաց: Քիւրդը ատելութեամբ կը լսէ անոր ըսածը և պիտի լսէ ալ, ճարը կտրած զինուորականները սահմանէն գուրս պարսիկներուն կը քարոզեն ու կը գրգռեն եկողդ-գացող հայերուն թալնելու ու կոտորելու. այսքան ժամանակ ոչ էս կողմէն և ոչ էն կողմէն ոչ մէկ կերպ չեն յաղողւեր թալանի աշխարհի որդիքը — զօրքերը:

Թալան-թուրանի վարժւած. Սալէհ էփէնտին է այսօր ուղարկւած Սշոյ կողմըրը: Սա էր որ Պարսկասահմանի վրայ մասնակցեց 800 հայերու զարդին, վառ գիւղի կոտորածին ու թալանին, Տահար Խան պարսկահպատակ նշանաւոր քրդի սպանման գործին, նոյն էփէնտին է որ այսօր կը պատրաստի սասունցի լիռնցիներու գէմ քաշ գուրգէնը ծրոնք գիւղի մէջ ապտակ մը կերցուց և ստիպւեցաւ փախչիլ բայց տեսնենք այս անդամ Սամոյ քաջերէն ի՞նչ պիտի ուտէ:

Սահմանի վրայ Թաքուրցի աշխաթի (Ծիկակի ցեղ մը) և պարսկահպատակ ու թրբահպատակ Հայդարցիներու իրար զէմ մղած կուին ու թալան-թուրանը փերջացւ առայժմ։ Հայդարցիները աւրեցին թաքուրցիներու լոգիստ անունով գիւղը ու թալնեցին. սպաննեց երկու կողմէն մօտաւրապէս 10 մարդ և մէկ քանի հաս ալ վիրաւորեր են։ Հազիւ 15 օր է անցեր այդ կուէն և ահա նորէն կը պատրաստւի աւելի մեծ թալան-թուրան ու կուելու ծրագիր երկու աշխեթներու միջև։

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Ս Ե Ն Է Ն

24 սեպտեմբեր 1902

Բասենը Լըբրումի վելայէթի քասաներորդ գայմագամութիւններից մէկն է։ Ուուս-ստաճկական պատերազմից յետոյ Կարսի շրջանի բոլոր տաճիկները գաղթել են այս գաւառը, այնպէս որ այժմ բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը տաճիկներ են։ 10-15 գիւղերից հազիւ մէկը Հայկական է. մի քանի գիւղեր էլ տաճկախառն են։

Աշունը մտել է, աշնանացան անելու ժամանակն է, բայց ժողովուրդը մինչև հիմա կալից չէ պրծել Վաղուց նա քաղել է արտերը, կալսել և վիզը ծուած՝ սպասում է, թէ երբ կը գայ միւլթէկիմը իր շահնաներով բահրան առնելու. (օրէնքով ութից մէկ)։ Ամէն գիւղում նստած են մէկ, երկու կամ երեք միւլթէկիմ իրենց 5-20 շահնաներով, որոնք շաբաթներով ապրում են ժողովրդի հաշով, հաւաքում իրենց հասանելիքը և բռնութեամբ պատրակելով թէ, ոյցորենը գոլացել էր, քիչ էք ցոյց տալիս ստիպում են ժողովրդին տանել իրենց բնակած տեղը հասցներ Ամէնափոքրիկ գիւմադրութիւն ցոյց տուղի պատիժը պատրաստ է։ Կառավարութեան էլ եթէ դիմես, ուշ չի գարձնում, այդ լաւ գիւտէ միւլթէզիմը և ինըը իր ձեռքով գիւմադրողի գատաստանը անում է։ Ոչ մի գիւղ բացառութիւն չի կազմում։

Վերջերս լուր է տարածւել, որ գալթականները գալիս են և այդ առիթով շշուկ են պտտեցնում թէ ֆէտայիները արտասահմանից յարձակում պիտի գոյծեն։ Մի քանի գիւղեր լիցւած են զօրքով, զօրք շեղած գիւղերում շահնաները զինւորի գեր են կատարում։

Բռնութիւնները շարունակում են։

Մի ամիս առաջ Խամացից և Խնուսից մօտ 20 հոգի գալթականներ, հետները մի քանի կանայք, գալիս Գոմաձորով անցնում են գէպի Ուուսաստան։ Սահմանից ոչ հետու, Ալթներուլազ գիւղի մօտ բռնում են, որոնցից 11 հոգին այժմ բանտն են։ Այդ առիթով բռնւած է նաև գոմաձորցի Մանուկը, գալթականներին գիշերելու տեղ տալու պատճառով։

Ամիս ու կէս առաջ Գոմաձոր գիւղի մօտով անցնում են 3 գիւրդ իրենց ապրանքների հետ։ Գիւղում գտնած դինուները չեն կարողանում բռնել նրանց և իրենց բարկութիւնը թափում են քրերի գնացած ճանապարհի վրայ գտնուող հայ բռստանջների գլխին։ Լաւ ծեծում են Գոմաձոր գիւղացի Դաւիթին, Քերոբին, Գերոբին, Խաչոյին։ Դրանցից Դաւիթը շատ ծեծելուց, մի շաբաթ պարկել է։ Յուլիսի վերջերին, Հասնանցից ցեղապետ համբդիկ Քուսաթափիկը մարդկանցից մասնակից լինելու պատճառով այնտեղ տիրում է օրինականութիւն։

Առաջին եղաւ կառավարութեան, սակայն վերջինս անտարբեր գտնւեց։ Ով գիւտէ արդեօք իր մատը խառն չէր։

Օգոստոս ամսին Հասնանցի Աջմիօ Խաշիտ աղայի։ և Զիմայդինցի Մահմէտ պէկի մարդկիը յարձակում էն Խովկերան գիւղի վրայ և տանում 30 եղ ՚Նրանցից Խաշիտ աղան բնիքաչի է, իսկ Մահմէտ պէկը քայլագամ։ Ահա ձեզ կառավարական պաշտօնեաներ։

Սրանից 4 տարի առաջ Հասնանցի Աջմասի մարդկիը քշում են Խնուր գիւղից 400 ոչխար, կառավարութիւնը իմանալով այդ բացարձակ աւազակութեան մասին, հետապնդում է և ոչխարների տեղ, ուրիշ ոչխարներ է առնում տալիս վասաւածներին։ Ժողովրդի համար դա մի չափանակած իրողութիւն էր, մի հրաշք։ Երկար ժամանակ նա չէր մոռանում այդ բրդար քայլը։ Սակայն, կարծես ինը կառավարութիւնը զգաց որ այդ քայլը իրեն վայել քայլ չէ։ Եւ ահա ամսոյս 14-ին Հասնանդալու գայմագամի կարգադրութեամբ, զինուրները Խնուր են մասնում և գիւղացիներից պահնջում 100 ոսկի, ասելով թէ դուք խարել էիք մեզ, նրանը ձեր ոչխարները չէին տարել ու առանց պատասխանի սպասելու՝ քշում տանում են գիւղի բոլոր կովերը, հորթերը ու ոչխարները։ Թողել են միայն փոքր թւով եզներ, երեկի այն էլ նրա համար, որ գիւղացիք ցանեն, հնձեն, իսկ իրենք լավին։

Կրտարակ գիւղացի Թումօն և եաղանցի Պօղոսը պարու տական լիներով Կասկանցի գիւրդ աշխեթ Ռաշիտ բէկին, սրանից 8 տարի առաջ մանում են նրա մօտ ծառայութեան։ Եօթ տարւայ եգիպտական տանջանք կրելուց յետոյ, նրանք ուզում են դուրս գալ, պարուից իրենց ազատ զգալով, բէկը թոյլ չի տալիս։ Գիւղացիները գիւմել են երգրում վալին և նրանից հրաման առել որ բէկը նրանց ազատութիւն տայ, բայց վերջինս աւելի է կատարում, ծեծելով երկութիւն էլ դուրս է անում, իր մօտ պահելով նրանց կանանց։ Եւ չկայ մէկը որից արդարութիւն պահանջեն։

Գարնանը Հասան-ղալայի թիւրքերը փակուցը էլ են գերձակ էկոյեանի աղջիկը, Հեքերատ գիւղացի Սիմօնի աղջիկն և նոյն գիւղացի Համբարձութիւն համբարձութիւն է։ Երեքն էլ մի քանի օր պահելուց յետոյ գուրս են քշել։ Քրիտերի ու տաճիկ լամուկների լրառութիւնները թիւ ու համար չունին։ Ժողովրդի համբարձութիւնը հատած է։

Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Է Ն

1 հոկտեմբեր 1902

Ակրջին տարիների սև օրերին ամենաշատ տուժով շրջաներից մէկն էլ էրզբումն է իր շրջականներով։ Ժողովրդի թշւառութիւններին ու նրա անցուցած գառն օրերին ծանօթ մարդիկ ասում են, որ էրզբումի վիլայէթը միւս տեղերի հետ համեմատած, աւելի կանոնաւոր կեանք ունի, որովհետև Ուուսաստանին սահմանակից լինելու պատճառով այնտեղ տիրում է օրինականութիւն։

Անիմաստ խօսքեր են դրանք ժողովրդին ուժասպաս անող, նրան բարոյապէս ու փիզիկապէս մեղնող ժանտախութիւնը՝ տաճիկ կառավարութիւնն ու քրդերը՝ միւսնոյն են ամէն տեղը—էրզբում լինի գա, թէ ուուսաց սահմանի մօտ գտնւող Յանձուղ Մարտիկը յարձակւեցին ծոտվերան գիւղի վրայ և տարան 8 կող, 4 եղ և 13 ձի։ Դի-

Քրդի համար աշխարհագրական տարբերութիւն չկայ. նա սպանում, թալանում է, ուր որ կարող է, ուտում է որ գիւղցու մօտ ուզէ, ով է նրա ձեռք բռնողը: Այս հեռութիւն գալիս են մի խումբ քիւրդ ձիւրոներ, ոտքից զլուխ սպառազինաւծ. Հայ գիւղցին նրանց նկատելու՝ երկիւղը սրտում շապավով մօտենում է և ասպանդակը բռնում: Աղաները իջնում են և առաջնորդուում հիւրատունը: Աղա է ամէն մի քիւրդ լինի նա մեծաւոր թէ ծառայ: Այսաջ հայերը պարտաւոր էին միայն թիւրդ պաշտօնեաները ընդունել այժմ քրդերն էլ աւելացան:

Կալերը վերջանալու վրայ են: Բերբը լաւ է և ասսանորդ հաւաքող տաճիկները ցնծութեան մէջ են: Դեռ արտերը չչնածած, միւլթէզիմերը փողով առնում են այս կամ այն գիւղը, նրանք իրենց շահնաներով ապրում են գիւղցիների հաշլին մինչև կալերի վերջանալը, յետոյ ստիպում են նրանց իրենց հաւաքւած բերբերը տանել իրենց ուզած տեղը: Այժմ տանելու սէզօնն է: Դէպի քաղաքը տանող ճանապարհները ծածկւած են սայլերի մի ամրող շարբով: Թէպէտ օրէնքով հրամայւած է որ միւլթէզիմերը և շահնաները գիւղցու վրայ չծանրանան, որ գիւղցին ծրիաբար նրանց բերբերը չփոխադրէ այս ինչ կամ այն ինչ տեղը, սակայն ով է օրէնքին նայում: Տաճիկ ու քրդի ամէն մի ապօրինի վարմունք հայերի վերաբերմաբ օրինաւոր է նկատում, իսկ հարկերի տակ ուժասպառ եղած հայի ամենաարդար, ամենաթոյլ բողոքը՝ ապստամբութեան նշան, հակակառավագչական քայլ:

Քաղաքի մէջ երկիւղը տիրում է բոլորի վրայ: Քաղաք եկող-դնացող հայերին խուզարկում են անխնայ, իսկ տաճիկներին հազարից մէկը, այն էլ ձեկի համար: Երեկոյեան ժամը 6-ից մինչև արևածագը ոչ ոք իրաւունք չունի քաղաքը մտնելու կամ քաղաքից գուրս գալու:

Արտասահմանից վերադարձաղ հայերից ոչ ոքին կառավարութիւնը ներս չէ առնում: Այստեղ շատ անհանգիստ են գաղթականների սահմանազինում երեւալու պատճառով: Լուր է տարածւել թէ զէնքով պիտի գան, թէ բոլորն էլ ֆէտայիներ են: Խեղճ մարդիկ, տարիներով հայրենիքից տարագիր լինել նրա կարօտը քաշել ու յետոյ երբ ուզում են գալ հայրենի օջախին վրայ շունչը վիշել՝ նրանց ասում են գուրք ֆէտայի էք: Էլ ուրիշ ինչ կերպով տաճիկ կառավարութիւնը կարողանայ արգիլ գաղթականների մուտքը:

Սեպտեմբեր 28-ին տեղիս բանտը բերին 2 մշեցի, որոնք նոր էին եկել և ուզում էին վերադարձան Մոզչ երկու հոգի բռնել են Խոզվերան գիւղում և Յ հոգի էլ Դալբի-բարա գիւղում:

Այսպէս, կառավարութիւնը միացած դապան քրդերի հետ՝ անընդհատ շարունակում են ծեծ, սպանութիւն, թալան, բանտ: Ժողովուրդը լուր տանում է այս բոլորը, սպասելով օգնութեան: Երբ է գալու օգնութիւնը:

Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Վ Ա Շ Ա Կ

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԵՆ

10 օգոստոս 1902, Ան

Անցեալ տալիէն սկսեալ լանի ոչ-համիդիէ աշխելթներուն մէջ համիդիէ գրելու ձգտում մը երեան եկած է: Այս մասին շատեր գիմում ալ ըրած են:

Ամէն ոք կը յիշէ այն օրերը, երբ կառավարութիւնը ինքը գիմում կ'ընէր քիւրդ աշխելթներուն զինուորագրւերու: Հատեր մերժած էին կասկածելով կառավարութեան անկեղծութեան վրայ և վախնալով մի գուցէ տակաւ առ տակաւ թիւրդը կառավարութեան ենթարկելով և կարգի տակ մտնելով՝ կորսնցնեն իրենց գրեթէ անկախ վիճակը և չկարողանան առաջւան պէս շարունակել իրենց շահատակութիւնները: Սակայն երբ փորձով տեսան թէ սխալած են իրենց կարծիքին մէջ և համուցեցան, որ համիդիէ գունդերն իրենց անւան և պաշտպանութեան շնորհիւ՝ աւելի լայն ասպարէզ գտած են ու անպատիժ կը կողոպտեն, կը թալնեն, կըսպաննեն ոչ միայն հայը, այլ նոյնիսկ թիւրդը, քիւրդը, և թէ համիդիէ կանոնադրութիւնը անոնց վրայ ոչ մէկ լուրջ պարտականութիւնը ընելէ և իրաւասութիւններ չսեղմէլէ զատ, ընդհակառակն աւելի լայն միջոցներ կուտայ զին-ւելու և զօրանալու՝ զղացին ոչ-համիդիէնները իրենց մերժման վրայ և այժմ իրենք են որ կը դիմն նոյն կառավարութեան իրենց ևս պաշտպանութիւն շնորհիւ՝ ազատորէն կողոպտելու, զինւելու և զօրանալու և այսպիսվ կայսերական կառավարութեան փառքը բարձրացնելու և իսլամական դինը պաշտպանելու: Դեռ որոշ պատասխան ստացած չեն, տաճիկ կառավարութիւնը ձգձգումներ կ'ընէ, ով գիտէ ինչ նպատակաւ:

Բոլորովվին միսալ է այն լուրը թէ կառավարութիւնը կ'ուզէ համիդիէններու զէնքերը ժողվել: Ընդհակառակը՝ նա խիստ միջոցներ ձեռք առած է որպէս զի քիւրդեր և համիդիէններ իրենց զէնքերու պաշարը շատցնեն և իրենց ունեցածը չծախին: Այս պատճառաւ միշտ քննութիւններ կատարել կուտայ, համիդիէ գունդերու մէջ, կըստուգէ անոնց զէնքերու հաշեւը և պակասը քիւրդ պէկերու վզին կը դնէ լրացնելու: Քաղաքին մէջ քիւրդերուն արգիլած է ըստ առաջնորդն զէնքերու մտնելն և այս չի նշանակեր թէ կ'ուզէ սեղմում դնել անոնց վրայ, այլ ոմէկ քարով երկու ձնձուկ զարնել: Նախ ցոյց տալ թէ կառավարութիւնը չուզեր քիւրդերուն երես տալ, և երկրորդ արդպիսով արգիլել որ քիւրդերը չկարողանան ազատորէն ծախել իրենց զէնքերը հայերուն: Որովհետեւ քիւրդը հակառակ կառավարութեան ջանքերուն, գիտակցութիւն չունի թէ ինքը մաս կը կազմէ ոկայսերական կառավարութեան և թէ պատասխան է, իրեւ համիդիէ գոնէ, աշխատել անոր շահերու պաշտպանութեան: Ընդհակառակը նա իր շահերը նկատի ունի միմիայն և այնչափ կը յարպէտ կառավարութեան օրէնքը, որչափ ինքը շահ ունի այդ օրէնքի գործադրման մէջ:

Մի ուրիշ շահ ևս կայ, որ ոչ-համիդիէններու փափագել կուտայ կառավարութեան դիմելու: Երբ երկու աշխելթներու մէջ կնիւ պատահի, ինչ որ սովորական է, կառավարութիւնը կ'օգնէ միշտ համիդիէ գունդերուն, իրաւացի թէ անիրաւ, օրինակ, գերջերս կերաւցի փոքր Շաքիր աղայ (ոչ-համիդիէ), որ նորոտուզի Գարիբիկ գիւղ մնայ, կ'երթայ Փաքակեատիւկ գիւղէն հարս բերելու: Մէմբարեանցինք (համիդիէ) կը յարձակին կերաւցիներուն վրայ, կոիւ տեղի կունենայ և մէկ քիւրդ ու երկու ձի կըստուգնին: Կառավարութիւնը ինպաստ կերաւցիներու տրւած պաշտօնական տեղեկագիրներու հակառակ, Մէմբարեանցիները կը պաշտպանէ: Այս օրինակին կարելի է կցել ուրիշ տասնեակ գէպքեր:

Սակայն ինչ որ ալ ըլլայ, այս ամէն հակառակութիւն-

ներ և պաշտպանութիւններ խեղճ հայերու շուրջը կը դառնան: Թիւրքը ստեղծեց համբիգին հայ յեղափոխութիւնը զսպելու, քիւրդը համբիգի զինորագրեւեցաւ հայը աւելի ազատորէն ձնշելու համար: Զենք դիտեր թէ որ աստիճան թիւրքը պիտի յաջողի և կամ յաջողած է իր ծրագրին մէջ միայն սա յայտնի է որ քիւրդիր հասած են իրենց նպատակին:

Յունիսի մէջ Հաճի Իզզէթ պէկ կառավարութեան կողմէ մասնաւոր այցելութիւններ տևաւ Մելանցի, Մարզկիցի, Թագուրցի, Շամակցի սա հմանադլին աշերէթեներուն: Յորդորած է զանոնք ամէն ջանք գործ դնել որ ֆէդայիններ մուտք չգտնեն սա հմանէն ներս և Հրահանդ տևած է չժողովնել իրենց շրջաններու մէջ ունէ հայի յառաջանալը, հարստանալը և միշտ աչքի ընկնող հայերու դլիմին զարնել:

Կառավարութեան ուզելով է որ քիւրդ աշերէթներ միշտ յարձակում կը գործեն Պարսկաստանի գիւղերուն, աւաններուն լույս, կը թալին և կը կողոպտեն: Սէմէտրերանցի Սայիս և Շամակցի Հասան աղաներ Խօշապի դայմագամէն կը ստանան իրենց հրահանգներն, իսկ Մարզկիցի Շարափ պէկ՝ Պաշտամէի միւթէսարիի կէն: Շարափ իր շահատակութիւններու միշտ շարժաւիթ ցոյց կուտայ ֆէդայիններ, իրեր թէ անոնց է որ կը հետապնդի և ոչ աւարառութեան:

Ֆէդային պատրւակ մը դարձած է ամէնքի ձեռք: Քաղաքին մէջ պահանջ ունիս թիւրքէ մը—չի տայ, կը հայհոյէ ոգուն ֆէդայի ես” ըսելով: Գիւղերու մէջ դապիթին աչք կը նետէ կնոջդ. հարկահաւաքը անսրադար սկահանջումներ կ'ընէ, փոխանակ 7-էն մէկ, 5-էն մէկ կը պահանջէ գաղուժալը. կ'ընդդիմանաս, իրաւունքներդ պաշտպանել կ'ուզես, կը զարնէ դիմիդ. “Կեեվազուր, ֆէդայի ես” կը գոչէ, և գուր բանտերու մէջ ֆէդայի ամբաստանութեամբ չմեռնելու համար՝ պարտաւորած ես լույս քիւրդը ազատորէն կը կողոպտէ ֆէդայի պատրւակին տակ: Դատարանի մէջ դատդ կը կորսնցնես նոյն պատճառաւ:

Դեռ այս օրերս Տէր-Պօղոսեան անուն մի հայ 2 սոկի պարտամուրհակի մը համար բողոքած էր կոմսար նուրի էֆէնտիի որդւոյն դէմ: Սուրհակը նուրիի ստորագրութիւնը կը կրէր Տէր-Պօղոսեանի հօր անւան վրայ: Երկուքն ալ տարիններ առաջ սպաննաւած են յեղափոխականներէ. թիւրքը իր գաղանութիւններուն համար, իսկ հայը՝ նուրիի տէրօրիստները դանելու նպատակով կառավարութեան օգնած լինելուն համար: Նուրիի տղան դատարանի մէջ կ'ըսէ. յուրիհակը կեղծ է, ինձ ամբաստանով ֆէդայի է. անոնք իմ հայրս սպաննեցին, ինիքը այս մարդու հօր ձեռք անցած է և մուրհակը պատրաստած: “Նախադահակ ժամանակով մը կը հարցնէ, յմիթէ Տէր-Պօղոսեանի հայրն ալ ֆէդայի էր”: յայու, նա ալ իմ հայրը սպաննողներէն է: Երբ այսքան թրբամոլ հայու մը համար այսպէս կ'ըսեն, երևակայեցէք ինչեր պիտի չըսեն քիչ շատ պատւախնդիր և ազգային զգացում ունեցողներուն:

Կառավարութիւնը ոչ մի առիթ չի կորսնցներ հայերու նիւթական և բարոյական զարդացումը կասեցնելու համար: Արդէն ամբողջ տարին հայը տուրբ տալէն աչքը չի կարող բանալ: կուտայ անհաշեւ, կուտայ աչքու ձախ:

ոչ իր պարտքը կը լմայ և ոչ ալ փայտը իր գլխէն կ'իջնէ: Այս ամառ նոր ցաւ մըն ալ աւելցած է. այդ գիւղերու տասանորդի վաճառման խնդիրն է: Ըստ օրինի իւրաքանչիւր գաւառի կերպոնատեղին աճուրդի պէտք է դրին գիւղերու տասանորդներն: Երբ արմտիք սուզ են, թիւրք, քիւրդ, հայ հարուստներ, վաշնաւուներ գիշատիչ ագռաւներու նման իրար ձեռքէ կը յափէշտակին գիւղերն, որովհետեւ վստահ են, որչափ սուզ առնի, կարող են գիւղացիի քամակէն հանել նա մանաւանդ կապալառուներու մեծագոյն մասը կառավարութեան պահանջատէրերն ըլլալով՝ իրենց պահանջի հաշուոյն կը գնեն գիւղերը (Պէտք չէ մոռնալ որ հայ կապալառուներ միշտ 1 կամ 2 թիւրք ընկերներով է որ կապալ կը վերցնեն, այլապէս անկարելի է):

Այս տարի արմտիք անհամեմատ աժան են, կառավարութիւնը կ'ուզէ հին գնով ծախել, իսկ կապալառուներ չեն մտենար: Անշուշտ մուկերու բոյն պիտի չգաւանայ կառավարութեան առանց արն ալ դատարկ գանձը: Հայ գիւղացին պատրաստ է. պէտք է իւրաքանչիւր գիւղի գիւղացիներ գնեն իրենց գիւղը՝ թանկ տարբիներու գնով. վայ իրենց, եթէ հակառակել ուզեն եւ ահա կը սկսի տառապանքի մի նոր շրջան. գայմագամներու շահատակութեան նոր ասպարէզ բացւած է: Կը կանչէին գիւղեր ու ուսնեներ, առաջարկ, ստիպում, ծեծ, բանտարկութիւն իրար կը յաջորդեն. բողոքներու առջև կը գոցւին մեծերի ականջներ, և հայ գիւղը լքւած ամէն կողմէ՝ կ'առնէ իր վզին այս նոր պարտքն ալ ուրկէ ազատելու համար տարիներ պէտք են, քանի որ այս տարւան իր հասորթը եթէ ամբողջովին իսկ ծախելու լինի չէ կարող իր այս նոր պարտքը լրացնել: հայի էժանութեան պատճառաւ:

Կաւաշ գաւառի զարդացած և լուսամիտ () գայմագամ Լութֆի պէկ, յուլիս 10-ին կը կանչէ նարեկ, Փալլբիներ, Մոխրաբերդ, Հիրեղ Պատականց, Փշավանց, Ընձակ, Վառենց Գանձակ, Բելու գիւղերու ուսներն ու անոնց խորհրդականները (իւրաքանչիւր ուս երկու խորհրդական կ'ունենայ) և կ'առաջարկէ գիւղերը գնեն: Ամէնքն ալ կը հակառակին. գայմագամը զայրացած կը հրամայէ բանտ նետել, արգիւլերվ: Նոյնիսկ բնական պէտքի համար գուրս ելինելու: Հայերէն մին 1 մէջիտ կ'առաջարկէ իր բնական պէտքը հոգալու համար, կը մերժեն և... ։

Ծատերը թէ չտոկալով նեղութիւններու և թէ ոչ մէկ կողմէ արդարութիւն տեսնելու յոյս չունենալով՝ յանձն կ'առնեն և կ'ազատին, բացի նարեկ, Փալլբիներ, Փշավանց և Մոխրաբերդի գիւղերու գլխաւորներն, որոնք լաւագոյն կը համարին նեղուիլ տանջուիլ քան թէ թշւաս ժողովուրդը նոր պարտքերու տակ ձեռք: Գայմագամը կրակ կտրած անոնց ընդդիմութիւննեն, կը հրամայէ տանել և ճանապարհներու վրայ աշխատցնել առանց նկատի ունենալու որ անոնց գեն անցեալ անցեալ տարի բարձակից էնին իրեն գաւառի ազատական ժողովի մէջ: Լութֆի պէկ մտրակը ձեռին նհայտէ գեավուրլար” ըսելով՝ կը հարւածէ և կըստափէ հող քար կրել և կը գոչէ: յՄութլագա ալաճագունը եօգսա տարագ ալթընտա նկատի մեռնիք: Համագիւղացիներ կը դիմեն կուսակալին, որ կարեւորութիւն չի տար: Գայմագամը տեսնելու առաջարկը պատճառ տալու էք, եթէ ոչ ծեծի տակ պիտի չըսնէ լութֆի պէտքի ազատական ժողովի մէջ: Լութֆի պէկ մտրակը անպատճառ տալու էք, եթէ ոչ ծեծի տակ պիտի չըսնէ լութֆի պէտքի ազատական ժողովը” (անպատճառ տալու էք, եթէ ոչ ծեծի տակ պիտի մեռնիք): Համագիւղացիներ կը դիմեն կուսակալին, որ կարեւորութիւն չի տար: Գայմագամը տեսնելու առաջարկը պատճառ տալու էք, յՄութլագա ալաճագունը եօգսա տարագ ալթընտա նկատի մեռնիք:

Կառավարութիւնը ոչ մի առիթ չի կորսնցներ հայերու նիւթական և բարոյական զարդացումը կասեցնելու համար: Արդէն ամբողջ տարին հայը տուրբ տալէն աչքը չի կարող բանալ: կուտայ անհաշեւ, կուտայ աչքու ձախ:

Յուլիս 21-ին, նիւֆուս քեաթիպի Ալի էֆէնտին և
պէօլիւր էմինի Սիւլէյման էֆէնտին կը զրկէ Նարեկ և
Փայլբներ՝ խոտի տասանորդը ժողվելու, թէ օրէնքով
պէտք էր գաւռառական ժողովն հայ և թիւրք պաշ-
տօնեայ մը կատարեն այդ պաշտօնը: Խոտի հունձի
յաջող տարիներ այդ գիւղերու տասանորդներ 1,000
յուրուցէն վեր բարձրացած չե, սակայն այս տարի հա-
կառակ հունձին միջակութեան՝ իւրաքանչեւր գիւղէն
7,000 լրջ: Կը պաշանջեն, առանց բարդերը համրելու
և կռւելու: Գիւղայներ կրկին կը հակառակին:

Գիշերւան ժամը 6-ին սարեկ կը կանչեն Փայլսին և ներու ու ուս Պետրոսը իր խորհրդականներով և կը հրամայէ ընդունել իրենց համար որոշած ցուցակը կնքել և վճարել Ուս և ընկերներ կը նդդիմանան. զապթիէներ բերելով կը յարձակին փառին, չարաչար կը ծեծեն, ուսի ծոցէն գիւղի կնիքը բռնութեամբ հանելով կը կնքեն և յայտէ շիմտի կիտինը գեապուրար[“] ըսերով ազատ կը թողնեն: Ալի էֆ. աքացիով կը զարն ու ուսի կողին և ոսկորը կը վնասէ. ուսը հիւանդ է այժմ: Նոյն ծրագրով կը վարեին սարեկ, Փշավանց և Մոխրաբերդ գիւղերու հետ: Վերոյիշեալ գիւղերու ու ներ և գիւղացիներ, թողած իրենց կալուկութը երեսի փայ, լցւած են քաղաք բողոքելու արդարադատ (^(*)) կուսակալին: Խոկ վերջին անոնց խնդիրը չ է վալ ալ ըրած է նոր գայմագամին. ոշունը կրկին պանիրի տիկը կապելով[“]:

Մայիսի մէջ՝ Ուստանի հարկահաւաք Գէշիմ չաւուշ
Նարեկ կերթայ և կը պահանջէ որ պանդուտիներու,
աղքատներու, մեւեալներու հարկեր գիւղը վճարէ: Երբ
անոնք առարկութիւններ կ'ընեն՝ ուս կարապետը, Ար-
թիւնը Մ. Վարդանը, ուս Յովաննը, եազօծի Վարդաննը
տաւարներու մսուրներուն կը կապէ չւանով և հոն գտնւող
թիւրքերու և քիւրդերու անոնց երեսը թընել կուտար
ըսենով: Կես զանոնք նոր միւսիւլման պիտի շինեմ: Ա
պահանջը կ'առնէ և կը հեռանայ:

Սի ուրիշ Հարկահաւաք՝ Վարանտացի Արդիւլ Համիդ,
սոսկալի խստութիւններով կը հաւաքէ տուրքերը։ Գիւ-
ղացիներ շատ անգամ կաշառք կուտան ժամանակ առ-
նելու Համար։ Արդիւլ Համիդ նոյն օրը կերպայ և երկրորդ
օրը կը դառնայ աւելի մեծ խստութեամբ։ Իր եղայրը
Արդիւլ Գաֆար, որ 10 հայէ աւելի սպաննած լինելուն
Համար իբր փախստական կը թափառի, իր եղաօր կ'օգնէ
և կըսպաննայ այն գիւղերու, որոնք իր եղաօր պահանջ-
ները չեն դոհացներ։ և կամ մտադրութիւն կունենան
անոր դիմադրելու։ Գաֆար զինւած՝ աղատ Համարձակ
կը շրջի Ռստանի մէջ։

Յունիսի 15-ին, Շամակցի աշխրէթէն Տրպաշ խանի գլխաւոր Խօլամ համբդիէի հարիւրապետ Նէմաթէ Նէմաթան Հայոց Զորի Հիրք գիւղէն Ալմաստ խանըմ անունով թիւրք կնոջ մը աղջիկը իր տղուն կնութեան առնել կուզէ: Կինը կը մերժէ գիւղասմբի միւտիրի Ներկայութեան: Նէմաթէ Նէմաթան 35 ձիաւորներով իվրէծ կնոջ և միւտիրին՝ կըսկսի Նեղել գիւղացիներն հայ թէ քիւրդ: Հիրքէն Եներլով՝ իր խօլամները ետեղ ձգած կը շրջի Հայոց Զորը: Աղջիի Տէր Կարապետը իր 3 ընկերներով կը կոյսպէտէ, ինչպէս նաև Ասոււծաշնցի երկու հայեր, Նորդեղի նորընծալ քահանան, մէկ երկու քաղաքացիներ: Ի լուսն ամենեցուն կ'անցնի Հնտտան գիւղ գիշերելու: Ոչս և գիւղացիներ անմիջապէս կրսկսին

պատրաստութիւններ տեսնել զանոնք հիւրասիրելու համար: Նէմաթանի խօսմանը կիյնան գիւղը, կը մտնեն տուններ և կըսկսին լրբութիւններու: կը բռնաբարեն Պատուրի կինը՝ Խղնասը, Յովհաննէսի կինը՝ Մարիամ, Գէորգի կինը և ուրիշներ: Բողոք չկայ, ուր և ում բողոքեն: Խեղձերը յուսահատ և ամօթահար՝ կ'ուզեն ծածկել իրենց այս անպատճութիւնը:

Պիրանցի Սուսմաֆայ փաշան Շատախի Արմեղաս
գիւղէն բռնութեամբ կը տանի 360 դառ, 30 արծ և
200 զըշ. Այս լիրը աւատական առաջին գիշեր-
ւայ իր աւունքը կը կը գործադրել թէ իր աշխրէթին
ևթէ իր շաղանի հայ և քիւրդ բնակիչներու մէջ:

Ստորին կարկարէն կը գրեն յուղիս 28 թուվ

„ Խաղձալի է մեր գրութիւնը և անտանելի մեր նեղութիւնը. քիւրդը մէկ կողմէն, կառավարութիւնը միւս կողմէն, երկու սուրբի մէջ ենք մնացեր, որ դին դառնանք սուրբ մեր սիրտը կը խրի: Այս տարի Ճմեռ յունաստի 25-ին Լեռնիս գիւղի բարբարոս մի քիւրդ Փարուտի տղայ Սայիտ ցորեն կը բերէ Արդու հայաբնակ գիւղի ջրաղացը աղալու: Վարձք տալ չ'ուզեր: Երբ հայեր կը պահանջեն, մեծ կացին մը առած անոնց վրայ կը յարձակի և մէկ քանին կը վիրաւորէ: Հայեր կը բռնեն զինքը խանչալը կ'առնեն վրայէն և կը տանին գոլ միւտիւրիին: Վերջինս առանց անոնց բողոքը լսելու՝ ազտա կը թողնէ Սայիտը: Այս գէպքէն մի քանի օր վերջ՝ նոյն քիւրդին ուրիշներ մնացած զինւած կը յարձակին հայ գիւղին:

վրայ, Կարապիտ անունով մի պատանի ձեռքը կը ծակւի հրացանի գնդակէն։ Եթէ գիտեր ի՞նչ ընենք, դիմա-դրելու մեջ ուժ չ'ունինք, իսկ մեր բողոքը լսող չկայ։
” Եղեգիս գիւղացի այրի կին մը իր արտաք գրաւի դրած էր Մուրատ անուն Հայու մը մօտ Կինը բրդերէ գրգռւած կը բողոքէ շէյխին, շէյխը արտաք իրեն հետ բաժնելու պայմանաւ՝ Մուրատի ձեռքէն կը և լիլէ։ Ապա Հայերու ձեռքով Հնձել կուտայ և խեղճ կնոջ ոչինչ չի տար։ Կինը յունիսի 10-ին կրկին շէյխին կ'երթայ և իր բաժինը կը պահանջէ։ Խօշամներ շէյխի ակնարկին վրայ անմիջապէս կը լսեղդեն և կը տանին աղբանոցը կը թաղեն դիմակր”։

ՔՐԴԱԿԱՆ ԲԱՐ ԲԵՐԵՆ

(ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱ-ՏԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԵՆ)

Սարսափելի կուիւներ են որ տեղի կունենան քիւրդ
ցեղերուն միջև։ Եղբայր եղբօր դէմ է ելած, ազգականը
ազգականին կը մորթէ, արիւնակիցը արիւնակիցին կըս-
պաննէ։ Հայաստան իրակ ընկաւ, հայերու արիւն դետերու-
պէս հոսեց, հայ աղջիկներ հարիւրներով առեանգւեցին՝
դարձեալ չիանգստացաւ քեւդը, նա, որ կը կարծեր
թէ իր գժբախտութեան ու աղքատութեան միակ պատ-
ճառը հայի գոյութիւնն է։ Բաւական ուշ սկսան հաս-
կընալ որ իրենց չքաւորութիւնն առաջ բերողը հայը
չէ։ շատ անագան ուղեցին ըմբռնել որ հայ ապգը իր
աշխատասիրութեան ու չարքաշութեան շնորհիւ երկրի
մէջ անհրաժեշտութիւն ներկայացնող տարր մ'է։

Եւ աշա այսօք, երբ քիչ թէ շատ կարելիութիւն կայ ժողովրդեան հասկցնելու, որ երկրի մէջ գոյութիւն ունեցող չարիրի պատճառը զննառան սենաաետներ, մօյաներ,

շէլսեր և հէնց նոյն ինքն կառավարութիւնն են. աչա այսօր է որ վերոյիշեալներու կողմէն ձիգեր ու եռանդուն ջանքեր չեն խնայիր խլատում ձգելու ամրօխին մէջ, ընդհարում՝ առաջ բերելու համրդիէներուն մէջ:

Ահա ցեղապետ մը՝ բռնակալի անդուսպ հակումներով վառած, որ չուզեր իր քով իրմէն ուժեղ կամ իրեն հաւասար ուրիշ մը տեսնել Խոկոյն կը գրգռէ ամրօխը անոր դէմ, կը հրամայէ իր մարդիկներուն սպաննել զայն: Երկու կողմերն ալ կը կուտին, կը ծեծկւին, շատ անդամ տուժող գարձեալ հայը կ'ըլլար:

Ահա շէլս մը՝ կրօնական ու ցեղական ատելութեամբ լցցուն, որ իր ախոյանին ոչնչացումը կը փափագի: Մարդիկներ իրարու կը զարեւին, զէնքեր կը շառաչեն, դաշոյններ կը շողան ու վերջը անմեղ արիւններ կը հոսին:

Ահա վերջապէս լիբր ու անպատճառ կառավարութիւն մը, կասկածամիտ, յիմար սուլթան մը, որ իր ու իր աշխարհի համար սոսկալի ցաւ կը կարծէ հպատակներուն սէրն ու միութիւնը և իր բոլոր միգովն ու քըրտինքով փոխադարձ ոխ ու ատելութիւն առաջ բերել կը ջանար: Այսպէս ուրեմն, ցեղապետ, մօլլա ու կառավարութիւն համերաշխ դաշնակցութիւն կը կազմեն ու տակն ու զրայ կ'ընեն ամրոջ երկիրը:

Այս փոքրիկ տեսութենէն յետոյ ընթերցով ուշադրութիւնը հետեւեալ դէպքերուն կը դարձնեմ:

Գարնան սկիզբը Զիլանցիր ու Հասնանցիր կուտի բըռնելով՝ կանոնաւոր զօրքը միջամտեց: Երկուստեք ընդհարման միջոցին 4 զինուոր և յիսնապետ մը զոհ կ'երթան:

Ասկէ քանի մը օր առաջ Հայդարանլի Հիւսէին փաշայի ու Ատամանլի Իրարահիմ բէկի միջն կալի տեղի ունեցաւ: Յիշեալ Հիւսէին փաշան ամբողջ Բագնոց և իր շըջակայքը տիրելէն, անոնց հարկը, տասանորդը ու այլեայլ անտեղի տուրքեր պահանջելէն ետքը՝ կ'ուզէ տիրել նաև իր սահմանէն դուրս գտնուող գիւղերուն ու հովիսներուն: Տարի մը յառաջ իր ցեղակիցներէն թէլլի բէկ անւամք մէկը կը զոկէ յիշեալ Իրարահիմ բէկի գիւղելէն մէկի մէջ բնակելու, որպէս զի տարիէ մը յետոյ արդարեղ ևս իր սեպականութեանց մին դարձնէ: Այս գաւառին մէջ և դուրս Հիւսէին փաշան բացարձակ սուլթան է ճանաչւած իր ցեղակիցներէն և չորրորդ բանակի հրամանատար միւշերէն:

Սակայն այս ընդհարումը յաջող ելք մը չունեցաւ: Երկու կողմերն ալ ու քրդերէն մաս մը, առնւազն 2,000 հոգի, տեղս հաւաքւեցան: Միմանց հետ ունեցած ընդհարումն ետքը՝ դարձեալ Հայերուն Ճնշեցին ու պէսպէս զրկանաց ենթարկեցին: Քիւրդ խառնիձման բազմութիւնը լցցւեցաւ Հայերուն տները իւրաքանչեւ տուն 15-20 ձիաւորէ աւելի:

Ասոնք վսեմափայլ սուլթանէն արտօնւած առատ ամսականներով չէ որ իրենց ծախսերը մինչեւ Հիմա հոգացին, ալլ ինեղծ ու աղքատիկ Հայ գիւղացու գլխին լարնելով ու անոր իր օրական պարենէն զրկելով: Այսօր մեր գիւղաքաղաքը կատարեալ պաշարման մէջ է. եթէ մշակ մը բանուոր մը գործի երթայ անպատճառ գանահարութեան պիտի ենթարկւի: Գալով իդական սեռին, որպէս բանտարկեալ մը լսոր զնդանի մը մէջ փակւած, արև երդիկէն միայն կը տեսնէ:

Յուլիս ամսի մէջ Հիւսէին փաշայի և Սիլէյանցի Սիլէյան և Աւալմածիտ երկու եղայրներու միջն կատարեալ ընդհարում մը տեղի ունեցաւ:

Ամէնէն առաջ Հիւսէին փաշան ատանց ոչխարները բրնութեամբ կը քշէ կը տանի. Աւալմածիտ իր վեց ծառաներով իսկոյն անոնց ետևէն կ'ընկնի, բայց ձեռնունայն ետ կը դառնայ, երկրորդ անգամ երբ Հիւսէինի մարդիկը կ'երթան նորէն բան մը բերելով՝ Սիլէյան բէկ իր եղայրներով ու ծառաներով անոնց առջև կ'ենչէ, քանի մը հոգի կը վերաւորէ և երեք ուստական հրացան ձեռքերնէն կը խլէ: Երբ այս լուրը Հիւսէին փաշան կը լսէ՝ կը կատղի և իսկոյն էմին և Հաճի-Թէմուր փաշաններուն կերպով մը մարդ զբկելով օգնութիւն կը խնդրէ: Օգնութիւնը կը հասնի և միացած բանակը՝ մօտ 2,000 ձիաւոր և 800 հետեւակ, կատաղաբար թշնամոյն վրայ կը յարձակի և երկու կողմէն ալ կըսկի պատերազմը: Սաստիկ կուր տեղի կ'ունենայ Ծամե գիւղի բլուրին վրայ: Ապա կըսկին դառնալ Սիլէյան բէկի գիւղին վրայ, որ մէկ քանի տուններէ կը բաղկանայ: Պատերազմը երեք օր կը տեսէ. չորրորդ օրը Աւալմածիտ տեսնելով որ իր եղայրը Սիլէյան վերջին աստիճան նեղութեան մէջ կը գտնէի՝ իր վեց ծառաներով եղայր օգնութեանը կը փութայ, ճեղքել անցնելով թշնամույն ահագին բանակը: Եր ծառաներէն չորսը կըսպաննեին և մէկն ալ կը վերաւորւի: Այնուհետեւ կուր մինչեւ երեկոյ կը շարունակի և երբ փամփուշտնին կը հատնի անձնատուր կը լինեն ըսելով՝ մենք բեռ ու քրոջ որդի ենք, հերիք է մէկզմէկ սպաննենք⁴: Հիւսէին փաշան այդ երկու եղբայրները և Սիլէյան բէկի որդին գերի կը տանի և այդպիսով պատերազմն ալ կը վերջանայ:

